

Բ. Խ. ՄԵԺՈՒՆՑ

Գրաբարից աշխարհաբարին անցման շրջանին բնորոշ տեղաշարժերից են բառի հնչյունակազմի մեջ տեղի ունեցած տարբեր կարգի փոփոխությունները: Ընդ որում, եթե աշխարհաբար գրական լեզուն շատ դեպքերում հարազատ է մնացել հին հայերենին, ապա բարբառներում պատմական հնչյունափոխության երևույթներն ունեն բազմաձև դրսևորումներ: Բնական է, որ բարբառային փաստերն աճելի հարուստ են, արտացոլում են հնագույն շատ երևույթներ և կարող են բացահայտել հայերենի վաղ շրջանում կատարված հնչյունական ինչ-ինչ տեղաշարժեր: Մի հանգամանք ևս: Հին հայերենի պայթեղական բաղաձայնների և այլ հնչյունների ծագման ու արտասանության վերաբերյալ հայագիտության մեջ կան հակասական, անորոշ շատ կարծիքներ, որոնք այս կամ այն չափով կարող են որոշակի դառնալ բարբառային փաստերի մանրամասն հաշվառումով: Նկատի ունենալով այդ ամենը՝ լեզվական բուն փաստերի շարադրանքից առաջ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի դիտարկումներ, որոնք, բարբառային լինելով հանդերձ, արտացոլում են նաև հայերենի բոլոր տարբերակներին բնորոշ հնչյունական առանձին դրսևորումներ: Այս առումով առավել հետաքրքիր է բնիկ և փոխառյալ բառերի տարբեր արտահայտությունների վերաբերյալ հայտնի այն օրինաչափությունը, որ առաջ է քաշել Հ. Հյուբշմանը հին հայերենի համար. «Այն բառերը, որոնց մեջ նախալեզվյան Ծ, Ը, Գ-ի դիմաց ունենք Ա, Ս, Կ և Բ-ի դիմաց Բ, Վ, բնիկ հայերեն են, իսկ այն բառերը, որոնց մեջ ունենք Բ, Գ, Դ և Ա, Փ, իրանական փոխառություններ են»<sup>1</sup>: Բառերի նման կարգի շերտավորումը առավել ակնհայտ է ժամանակակից հայերենի բարբառներում, միայն թե բնիկ և փոխառյալ բառերի հարաբերակցության մեջ կատարվել են տեղաշարժեր: Այսպես՝ եթե հին հայերենում փոխառյալ բառերի յուրահատկությունը տարածվում է հին և միջին պահլավերենից անցած բառերի վրա, ապա ժամանակակից բարբառները դրանք որևէ կերպ չեն զանազանում նախալեզվյան բառերից, այսինքն՝ հնագույն փոխառությունները (հունարեն, ասորերեն, հին և միջին պարսկերեն) բուն բնիկ և շտուկաբանված բառերի հետ միավորվում և առանձին շարք են կազմում՝ ենթարկվելով պատմական հնչյունափոխության միևնույն օրինաչափությանը, ինչպես՝

- Հնխ. verēn > զառն (գրբ.), զա՛ն (Ա<sub>12</sub>., Երև., Կր., Մ<sub>2</sub>. ևն), քառ (Ռոդ., Տիգր.)  
 կ'անր/կ'ան (Ղրբ., Ուրմ., Վն. ևն):  
 Պհլ. patkar > պատկեր (գրբ.), բաղգէր (Ս<sub>2</sub>., ննխ., Հմշ., ՀՃ., Սեբ.), փաթգէր (Պ<sub>1</sub>.), պատկեր (Ուրմ., Վն., Երև., Կր. ևն):  
 Հուն. episkopos > եպիսկոպոս (գրբ.), յէբիսկաբուս (Ա<sub>12</sub>., Երև.), էբիսկաբոս (Պ<sub>1</sub>., Ռոդ.), յէբիսկոբոս (Խրբ., Սեբ., Ս<sub>2</sub>.), յէպիսկոպոս (Ջղ., Վն., Ղրբ.):

<sup>1</sup> Է. Աղայան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1958, էջ 292:

ՊՆԼ. frēštak > հրեշտակ (գրբ.), հրիշղագ (Ակն., ՊԼ., Ռոդ., Սեբ.), խըրէշտակ (Ոզմ., Վն.), խըրշտակ (Ուրմ., Մրդ.), հրբէշտակ (Մղր., Ղրբ. ևն):

Բառերի հնչյունակազմի նման դրսևորումները որոշակի հիմք են տալիս եզրակացնելու, որ նախահիմք-գրաբար-բարբառներ հարաբերակցությունը աստիճանական է, և բարբառների բառապաշարի հիմնական շերտը ձևավորվել է ոչ թե նախալեզվի կամ հին և հնագույն փոխատու լեզուների անմիջական ազդեցությամբ, այլ՝ հին հայերենի միջնորդությամբ կամ հենց նրա հիմքի վրա:

Հայ բարբառների բառային կազմում առանձնանում է բառերի մի սովոր խումբ, որը ներմուծվել է անմիջապես փոխատու լեզուներից, ընդ որում, հթե այդ բառերը իրենց գործածությամբ չեն տարբերվում բառապաշարի մյուս շերտից, ապա դրանք հեշտությամբ կարող են զանազանվել հնչյունակազմի յուրահատուկ դրսևորումներով: Բանն այն է, որ արաբական, թուրքական, նոր պարսկական փոխառությունները, բարբառներում մշտապես հանդես գալով մայր լեզուներից ավանդած հնչյունակազմով և չենթարկվելով մյուս շերտի բառերի վրա տարածվող հնչյունափոխական օրինաչափություններին, առաջ են բերում տարբեր կարգի շեղումներ: Դրանցից են, օրինակ՝

1. Միևնույն բառաձևի պահպանումը հնչյունական տարբեր համակարգ ունեցող բարբառներում: Այսպես՝ Մեղրիի և Գորիսի բարբառները համապատասխանաբար ունեն եռաշարք անտեղաշարժ և երկշարք ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգեր, սակայն այդ երկու բարբառներում էլ նոր փոխառությունները նույն հնչյունակազմով են հանդես գալիս.

Մեղրիի բրբ.

Գորիսի բրբ.

բաղ «այգի»	բաղ
բաննահ «որմնադիր»	բաննահ
դաստահ «փունջ»	դաստահ
դոստ «բարեկամ»	դոստ

2. Տվյալ բարբառին բնորոշ պատմական հնչյունափոխության օրինաչափությունների խախտում: Հայտնի է, որ Համշենի բարբառում բնիկ բառերի և միջնորդական փոխառությունների մեջ մ, ն ընգայիններից առաջ ա ձայնավորը օրինաչափորեն դառնում է օ, սակայն անմիջական փոխառությունների նշված դիրքում ա-ն մնում է անփոփոխ: Այսպես, օրինակ՝ մի դեպքում առանձնանում են աման > օմօն, անուն > օնուն, բան > պօն, բերան > պնօն, դանակ > տօնագ, թան > բօն, իսկ մյուս դեպքում՝ ամա «բայց», անջախ «հազիվ», համան «նույն», շօբան «հովիվ» բառաձևերը:

3. Հայերենի այլ բարբառներին բնորոշ, բայց տվյալ բարբառին խորթ հնչյունների ներմուծում: Թեև հնչյունների ներմուծման մասնակի դեպքերի կարելի է հանդիպել համարյա հայերենի բոլոր բարբառներում, սակայն այստեղ սահմանափակվենք մի կարևոր փաստով: Վանի, Ուրմիայի և մի շարք այլ բարբառներին անցած ներքին միջնորդական փոխառություններում տեղի է ունեցել հ > խ օրինաչափ փոփոխությունը, իսկ արտաքին ոչ միջնորդական փոխառություններում հ-ն մնում է անփոփոխ: Ինչպես Հր. Աճառյանն է նկատել «... թուրքերի տիրապետության շրջանում են կատարվել այն բոլոր փոխառությունները, որոնք պահում են նախաձայն հ-ն: Այսպես են ոչ միայն զուտ թուրքերեն բառերը, այլև այն արաբերեն և պարսկերեն բառերը, որոնք թուրքերենի միջոցով անցած են Վանի բարբառին»<sup>2</sup>: Երևույթը հաստատելու համար բերենք մի քանի օրինակներ.

<sup>2</sup> Հր. Աճառյան, ՔՃՈՒԹՅՈՒՆ Վանի քարքառի, Երևան, 1952, էջ 67:

hazir «պատրաստ»	հնզրր	հազրր
hayvān «անասուն»	հայվան	հէյվան
hava «եղանակ, օդ»	հնվա	հավա
hammal «բեռնակիր»	համալ	համբալ
halva «հավվա»	հալվա	հավվա

4. Հայերենի բարբառներին անծանոթ նոր հնչյունների առաջացում: Հայերենի մեջ ֆ խուլ շփականի գործածությանը հանդիպում ենք ուշ շրջանում, որը ոչ միջնորդական փոխառությունների հետ տարածվել և սովորական է դարձել Վանի, Ուրմիայի, Նոր Նախիջևանի և մի շարք այլ բարբառներում, ինչպես՝ ֆալ «գուշակություն», ֆայղա «օգուտ», ֆէնէր «լապտեր», ֆէնտ «հնարագիտություն», ֆիթիլ «պատրույգ» ևն: Նույն կերպ Թիֆլիսի և Ուրմիայի բարբառներին է անցել կոկորդային պայթական ղ բաղաձայնը՝ վրացերենի և արաբերենի ազդեցությամբ: Այս հնչյունի վերաբերյալ եղած կարծիքները ամփոփելու համար բավարարվենք Հր. Աճառյանի հետևյալ դիտողությամբ. «Այս բարբառի (Թիֆլիս) գլխավոր հատկություններն են հետևյալները. պայթականները հնչվում են պարզ ու լիակատար թրթռումով, խուլները արտասանվում են կոկորդի սղումով, նման վրացերենի. բաղաձայնների մեջ ւավելացել է ղ ձայնը, որը հատուկ է վրացերենին»<sup>3</sup>:

Այսպիսով, ժամանակակից բարբառների բառապաշարը երկու շերտի է բաժանվում: Առաջին շարք՝ այն բառերը, որոնք բարբառներին հն անցել զրաբարի միջնորդությամբ. դրանք հավասարապես արտացոլում են յուրաքանչյուր բարբառի հնչյունական համակարգերի առանձնահատկությունները՝ իրենց վրա կրելով պատմական, փոխազդեցական, դիրքային և այլ կարգի հնչյունափոխական երևույթներ: Այդպիսի բառերը պատմականորեն անվանում ենք բառային փոխանցումներ: Երկրորդ շարքի բառերը իրենց հնչյունական զգումով հիմնականում անփոփոխ են և չեն հարմարեցվում տվյալ բարբառի հնչյունական համակարգի առանձնահատկություններին: Այդպիսի պատկեր են ներկայացնում արտաքին ոչ միջնորդական փոխառությունները:

Բարբառներում պահպանված հնչյունական հնագույն երևույթներից է հ-ի առկայությունը մի շարք բառերի սկզբում, ինչպես՝ հեռդ(իկ) > հնիս. portho-, հիւն > հնիս. k<sup>2</sup>i, հորթ > հնիս. porthu-: Հին հայերենում նախալեզվյան այդ բառերը գործածվում են առանց որևէ նախաձայն հնչյունի: Աշխարհաբար գրական լեզուն, որքան էլ ձգտել է հետևել զրաբարին, այնուամենայնիվ լիովին չի խուսափել ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությունից: Այսպես, օրինակ՝ զրաբարյան որթ «կովի ձագ» ձևի դիմաց նոր լեզուն օգտագործում է հորթ բառը, որը ընդհանրացված կիրառություն է գտել հայերենի բարբառներում: Հայագիտության մեջ հաստատված է, որ հորթ ձևը բառի հնագույն վիճակն է ներկայացնում հայերենի մեջ «... որդի առաջանում է հնիս. portioyodakhyg, ... որի ք նախաձայնը ավելի հավատարմությամբ պահում է դեռ գվո. հորթ»<sup>4</sup>: Բառիս նախահիմքի կառուցվածքի վերաբերյալ որոշ ճշգրտումներ է կատարում Գ. Զահուկյանը, իր դիտողություններում, սակայն, նա չի մերժում ոչ բառի հնդեվրոպական ծագումը և ոչ էլ հ նախաձայնի հնագույն վիճակը. «Աճառյանը գերադասում է նձԲ-ից եկող մեկնությունը՝ որթ-ը կապելով որթ

<sup>3</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 390:  
<sup>4</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 579:

«հորթ» բառի հետ: Եթե վերջինս ճիշտ է, ապա թերևս հայ. և հուն. բառերը պետք է դնել \*per- «ծնել» արմատի տակ, որից հայ. որթ «հորթ»<sup>5</sup>:

Արմատական բառարանում երդ-ը բնագրվում է շտուգաբանված բաների շարքում: Բառի ծագումնաբանական քննությանը այլ կերպ է մոտենում է. Աղայանը: Ամփոփելով բարբառներում գործածվող բառիս հնչյունական հնարավոր տարբերակները՝ հեղինակը դրանց համար առանձնացնում է երեք հիմնակա:ն նախածեղեր՝ երդ(ի՛), հերդ(ի՛), հուրդ(ի՛), որոնք և բխեցնում է նախալեզվյան per-, perə արմատի perto-, porto- ածանցավոր տարբերակներից: է. Աղայանը հայերենի համար սկզբնական է համարում հ նախաձայնով ձևերը. «Դա նշանակում է նաև, որ բարբառային ձևերի նախահունչ հ-ն հետագա հավելում չէ, այլ նախնական հ-ի պահպանումը. մյուս կողմից, բարբառային ե, ու ձայնավորներով տարբերակները ճշտորեն համապատասխանում են հնդեվրոպական վերին և միջին աստիճաններին»<sup>6</sup>:

Անցնելով գրաբար-աշխարհաբար գրական լեզուների մեջ տեղի ունեցած հնչյունական տեղաշարժերին՝ նշենք, որ նոր գրական լեզվում հին հայերենի ձայնավորները հիմնականում անփոփոխ են մնացել բառամիջում և վերջում, իսկ բառասկզբում անհամապատասխանություն կա ե և ո ձայնավորների արտասանության մեջ: Առաջինի համար բնորոշ է ե>յէ, իսկ երկրորդի համար՝ ո>վօ անցումը: Եթե հայերենի գրական երկու տարբերակները որևէ կերպ հիմք չեն տալիս բացահայտելու համար պատմական այդ անհամապատասխանությունների պատճառները, ապա բարբառներում առկա զգալի թվով փաստերն ու հնչյունական ինչ-ինչ օրինակափոխություններ անառարկելիորեն օգնում են լուսաբանելու ո>վօ փոփոխության գործընթացի սկզբնավորման և աստիճանական ձևավորման հետ կապված տարբեր կարգի հարցադրումներ: Առկա փաստերի քննությունը սկսելուց առաջ նշենք նաև, որ հայագիտության մեջ ո>վօ պատմական անցումը մեկնաբանվում է կա՛մ նախահիմքի երկբարբառի գոյությունմբ, կա՛մ ձայնավորների երկբարբառացման գործընթացներով: Առաջին կարծիքին է հակված Ա. Ղարիբյանը, որը և գրում է. «Բառասկզբին գրական լեզվի մեջ պարբարյան այս «ո» ձայնավորը արտասանվում է «վօ», որ ամենալավ ապացույցն է, թե այդ ձայնավորը երկբարբառային արտասանության շրթնային ձայնավոր է եղել, որի մեջ երկբարբառային էլեմենտը ուժեղանալով վերածվել է շրթնատամային «վ» բաղաձայնի»<sup>7</sup>: Նման կարծիք, սակայն Ֆ հնչյունի առաջացման մասին, հայտնում է նաև Հր. Աճառյանը. «Ինչպես վերը տեսանք, Ֆ ձայնին ծագման պատճառը ո-ի երկբարբառային ու արտասանությունն է, քանի որ օ-ի քով այսպիսի փոփոխություն տեղի չունենար: Արդ՝ քանի որ քաղաքացիք զուրկ են ո ձայնին և զայն օ հնչեն, բնականաբար զուրկ պիտի ըլլան այս տեսակ Ֆ-են»<sup>8</sup>:

Ձայնավորի երկբարբառացման ճանապարհով ո-ից վօ փոխակերպումը ամենայն մանրամասնությամբ քննության է առել Հ. Մուրադյանը «Հայոց լեզվի պատմական քերականություն» գրքում: Իր կարծիքը հիմնավորելու նպատակով հեղինակը վկայակոչում է բարբառային բազմաթիվ փաստեր, դիմում նախալեզվյան բառահիմքերի դրսևորումներին հայերենի գրական և խոսակցական տարբերակներում, կատարում հետաքրքիր և արժեքավոր

<sup>5</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Արխագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 184:

<sup>6</sup> Է. Աղայան, Բառաքննական և տրուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 64—65:

<sup>7</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

<sup>8</sup> Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, 1911:

դիտարկումներ: Լեմեն դեպքում Ն. Մուրադյանը երևույթը բացատրում է հայերենի ներքին զարգացման օրինաչափություններով. «Պատմական զարգացման ընթացքում հայերենի որոշ տարածքի բարբառներում սկսած երկբարբառացումը աստիճանաբար վերանում է (ունակության կորստի, այլ բարբառների կամ գրական լեզվի ազդեցության պատճառով և այլն): Եթե այդ բանը ոչ մի հետք չի թողնում բառամիջի դիրքի վրա, քանի որ այստեղ ու-ի երկբարբառային տարրի (ու-ի) վերացմամբ արդյունքում մնում է նախնական ձայնավորը (ո-օ), ապա բառակզբի դիրքում, որտեղ երկբարբառից առաջացել էր բաղաձայնական տարր (վ, ի), երկբարբառացման վերացումից հետո վ-ն: պահպանվում է բառակզբում, որով և այդ դիրքի հին ո-ն ստանում է երկհնչյունային ոօ-ի արժեք: Այսպես է առաջացել գրական լեզվի բառակզբի ո-ի վօ երկհնչյունային արտասանությունը, որը, անշուշտ, գրական լեզու է հեկկ կենտրոնական բարբառներում առկա օրինաչափությունից<sup>5</sup>: Թե՛ այս և թե՛ նախորդ կարծիքներից հետևում է, որ հիշյալ հնչյունափոխություն համար հիմք հանդիսացող երկբարբառը մշտապես տրված էր հայերենին, իսկ ձայնավորի երկբարբառացումը ընթացել է միայն հայերենում գործող հնչյունական օրինաչափությունների հիման վրա՝ առանց որևէ նախահիմքի կամ սկզբնապատճառի գոյություն: Սակայն մենք այլ պատկերացում ունենք ո>վօ անցման կամ պարզապես վօ-ի հիմքը կազմող նախնական ձևի մասին: Բուն հարցի քննարկումից առաջ անհրաժեշտ է հարվի առնել երկբարբառների և ձայնավոր հնչյունների պատմական փոփոխության միտումը հայերենի ժողովրդախոսակցական տարբերակներում: Հայոց լեզվի զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ հայ բարբառների համար առավել բնորոշ է երկբարբառների պարզեցումը, իսկ ձայնավորների երկբարբառացումը համեմատաբար աննշան է, ընդգրկում է փոքրաթիվ հնչյուններ և սահմանափակվում փոքր տարածքով: Հնչյունափոխության առաջին գործընթացը կարծես բնական է և հեշտ բացատրելի, քանի որ երկբարբառների բաղադրիչներից մեկի շեշտի տակ հայտնվելը հանգեցնում է մյուսի թույլ արտասանությունը, բնականաբար և անկմանը: Հակադարձ փոփոխության ընդունման դեպքում, մեր կարծիքով, պետք է ենթադրել որևէ նախահիմքի կամ արտաքին ազդակի գոյություն: Մի հանգամանք ևս: Ն. Մուրադյանը ու ձայնավորի երկբարբառացման հետ կապված որոշ խնդիրների պարզաբանման նպատակով դիմում է նաև հայերենի մի շարք բարբառներում գործող ո>ի փոփոխության օրինաչափությանը: Մենք հակված ենք ոչ թե հնչյունական հիշյալ երկու երևույթները համագրելու, այլ, ընդհակառակը, ցույց տալու համար, որ դրանցից յուրաքանչյուրը ունի պատմական ինքնուրույն ուղի: Այսպես, օրինակ՝ ո>ի փոփոխությունը սահմանափակվում է գրաբար-բարբառ հարաբերակցության մեջ, որտեղ գործում է հնչյունական հաստատուն մի օրինաչափություն, որի համաձայն հին հայերենի ու բաղաձայնը առանց բացառության դառնում է ի: Երևույթը ամբողջությամբ տարածվում է նաև ոօ-ով սկսվող բառերի վրա, անկախ նրանից, թե նախալեզվում դրանք ինչպիսի հիմքեր են ունեցել: Այսպես՝ վանի, Ուրմիայի, Մարաղայի բարբառներում ո>ի փոփոխության ենթարկվում են թե՛ հոգի<po. io-, հոգ<թօլ և թե՛ հովի<ovi-pa, հոտ<od նախալեզվյան տարբեր նախաձայնով ձևերը այն պատճառով, որ հին հայերենում այդ բառերը սկզբում ունեյն ու բաղաձայն: Այս երևույթը տեղի է ունենում վերը նշված բառային փոխանցման կանոնի հետևանքով:

<sup>5</sup> Ն. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Երևան, 1932, էջ 95—96:

Բարբառներում առկա փաստերի նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ ո>վօ փոփոխությունը միանգամայն տարբեր է նախորդ հնչյունափոխությունից: Եթե հ>խ փոփոխությունը տարածվում է սահմանափակ թվով բարբառների վրա, ապա ո>վօ-ն ընդհանրացված է, ընդգրկում է թե՛ այդ և թե՛ հայերենի մյուս բարբառների մեծագույն մասը: Երկրորդ՝ որոշակի է հ>խ փոփոխության պատմական ընթացքը, որը պայմանավորվում է հին գրական լեզվի հաստատմամբ և գործառույթյամբ, մինչդեռ ո>վօ փոփոխությունը հնարավոր չէ որևէ կերպ բխեցնել գրաբարից, ընդհակառակը, դրա համար ենթադրվում է հին գրական լեզվից դուրս, նրան զուգընթաց կամ ավելի վաղ շրջանում գոյություն ունեցող ինչ-որ նախահիմք: Այս խընդրում բարբառային փաստերը տանում են դեպի նախալեզուն: Ամենից առաջ նշենք, որ բարբառներում գործածվող ո-ով սկսվող բառերը մեծագույն մասով հնդեվրոպական ծագում ունեն: Արմատական բառարանում ամփոփված նման կարգի քսանչորս բառերից միայն հինգն ունեն անհայտ ծագում՝ ոլոբ, ոխ, ոչիլ, ոսկի, ուրոտ: Եթե հաշվի առնենք, որ ուրոտ բառի համար Հր. Աճառյանը հավանական է համարում է. Լիզենի առաջարկած \*poro- նախահիմքը, իսկ Գ. Զահուկյանը պայմանականորեն նախալեզվյան հիմքեր է առաջարկում նաև ոլոր<\*ulo-, ոչիլ<\*orghilo- բառերի համար, փաստորեն ընդհանուր շարքից դուրս են մնում միայն ոխ և ոսկի բառերը: Հարցի լուսաբանմանը նպաստում է նաև հո հնչյունակապակցությունում սկսվող բառերի շարքը, քանի որ առանձին դեպքերում բառասկզբի ո-ն և հո-ն միևնույն կերպ են արտահայտվում բարբառներում, ինչպես՝ հող>վող/ֆող, հոտ>վոտ/ֆոտ, որթ>որթ/ֆորթ, որս>վորս/ֆորս: Ծագումնաբանորեն հո-ով սկսվող բառերը նախորդ խմբի վիճակն են ներկայացնում: Բարբառներում գործածվող նման կարգի տասնմեկ բառերից ութի համար արմատական բառարանում առանձնացված են նախալեզվյան հիմքեր. միայն հոյն «պտուղը», հոս «հոսելը», հոբ արմատներն են, որ ընդգրկված են անհայտ ծագում ունեցող բառերի շարքում: Սակայն Ս. Տերվիշյանի և Գ. Զահուկյանի կողմից դարձյալ հավանական նախահիմքեր են առաջ քաշվում հոսել<srus և հոր<\*poro- բառերի համար:

Ծագումնաբանական խմբավորման այս ընդհանուր պատկերից հետևում է, որ ո>վօ փոփոխության սկզբնավորման պատճառը պետք է կուպել հիմք լեզվի հետ, այսինքն՝ նախալեզվից հայերենին անցած բառերի մեջ որոնել հնչյունափոխական այնպիսի օրինաչափություն, որով հնարավոր լիներ հաստատելու հիշյալ գործընթացը: Իրոք որ, հայ բարբառներում առկա որոշ փաստեր կարող են նպաստել դրան. միայն թե պետք է վերանայել հայ բարբառագիտական ուսումնասիրություններում արտահայտված այն կարծիքները, որոնց համաձայն բարբառներում ո-ից առաջ հանդիպող ֆ հնչյունի առաջացումը կապվում է գրաբարի հ բաղաձայնի կրած փոփոխության հետ: Հնչյունափոխական այդ օրինաչափությունը չի արդարացվում, օրինակ, որթ<portiu- և որս<porku- արմատական ձևերի դրսևորումներով, քանի որ դրանք Լիւրարտյան, Սեբաստիայի, Նոր Նախիջևանի ևն բարբառներում գործածվում են նախաձայն ֆ-ով (ֆորթ, ֆորս), մինչդեռ հին հայերենում այդ բառերը հանդես են գալիս առանց որևէ նախաձայնի: Հնչյունափոխական մի այլ կարգի շեղում է նկատվում Ղարաբաղի և Գորիսի բարբառների առանձին խոսվածքներում: Այսպես՝ հին հայերենի հ բաղաձայնը հիշյալ բարբառներում ամեն դիրքում մնում է անփոփոխ, սակայն որոշ բառերի սկզբում հ-ին համապատասխանում է վ, ինչպես՝ հող>վող/վէղ, հոտ>վոտ/վէտ, հոր>վոր/վէր: Պատահական չպետք է համարել, որ այդ անհամապատասխանությունը նկատվում է հենց ո-ից առաջ: Նշանակում է՝ այստեղ ոչ թե

տեղի է ունեցել հ>վ փոփոխություն, այլ պարզապես հնչյունափոխական հնագույն արտահայտություններից մեկն է (p>վ): Նշված շեղումները մասնակիորեն կարող են նպաստել հարցի լուսաբանմանը. իրականում ու-ի վիճակը հայերենում հանդես են գալիս նախաձայն հնչյունի համակարգային դրսևորումներ, որոնց հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խմբավորումները.

նախալեզու	գրաբար	Վանի բրբ.	Շատախի բրբ.	Վարաբաղի բրբ.	Տիգրանակ. բրբ.
og'hinio	ոգնի	վոգնիկ	ւոգնիկ	կուգնի	օգնիգ
u.o	ուլոր	օլթօրէլ	ուլրէլ	հնւլթօրէլ	օլըրիլ
olbh-	ողբ	---	---	---	---
pol-	ողող	օղօղել	օղօղել	ըղօղել	օղօղիլ
orm	ողորմ	օղօրմալ	օղօրմալ	ղօրմի տալ	օղօրմիլ
olyo/solio	ողջ	վոխշ	ւոխճ	---	վօխշուն
k <sup>w</sup> o-/*o-k <sup>u</sup>	ոչ	---	ւոնշ	վէշ	---
orghilo-	օջիլ	վոճիլ	ւոճիլ	հնւշնւլ	օշիլ
orsos	ոռ	ւոռ	---	վրէտ	վրո
rū	ոռնալ	վոռնալ	ւոռնալ	օռնալ	օռնալ
ozdos	ոստ	---	---	---	---
ostw-er	ոսկր	ուսկուռ	ուսկոր	վրէսկուռ	օսգուռ
ozd	ոստին	վոստին	ւոստին	---	---
g <sup>w</sup> o-	ով	վով	վավ	հօվ	վօվ
pod-/pedo	ոտն	վոտ	ւոտ	վրէտ	---
kuo	որ	վոր	ւոր	վրէր	վօր
orbhos	որբ	---	---	---	վրբփ
portioy	որդի	վորտի	ւորտի	վէրթի	օրթի
porthu-	որթ	վորթիկ	ւորթիկ	հօրթ	օրթօգ
rug-	ործ	վոռծկալ	վոռծկալ	ծոծ կ'ալ	---
org'hio-	ործ	վոռց	ւորց	վրէրց	---
rod-	որոճ	օրօճալ	օրօճալ	արուճ անէլ	օրօջալ
por/per	որոտ	---	---	րրօտալ	օրօդալ
pork'os	որս	---	---	հօրս	---

Ինչպես երևում է, նախալեզվյան **po** և **o** բառասկիզբը ընդհանրացված է հին հայերենում և բարբառների մեծ մասում. միայն Ղարաբաղի բարբառում է, որ որոշակիորեն տարբերակված են **po>հօ-**, **o>վրէ-** փոփոխությունները: Դրանից հետևում է, որ այս բարբառի փաստերով կարելի է կատարել պատմականորեն վերականգնված հիմքերի ճշտումներ: Այսպես՝ ոլոր < վլօ- և որս < pork'os բառերի համար հաստատվում է նախաձայնով հիմքեր, քանի որ բարբառներում դրանց դիմաց ունենք հնւլթօրէլ, հօրս ձևերը, մինչդեռ ոջիլ բառի համար Գ. Զահուկյանի կողմից առաջ քաշված orghilo- հիմքը պետք է ունենար որևէ նախաձայն, որովհետև բարբառում տարածված է բառիս հիմնահայկականով ձևը՝ հնւլշնւլ: Ով և ոչ բառերի համար պետք է կատարել հիմքերի տարբերակում: Առաջինը բխցնել **g<sup>w</sup>o-**ից, որ **g<sup>w</sup>>հ** փոփոխությամբ լինում է հօվ, իսկ երկրորդի համար հարմար է ընդունել **k<sup>w</sup>o-**, որը նախաձայնի անկմամբ դառնում է **o**, իսկ բարբառում հետևում է վրէ: Նույն կերպ ոտ և հետ բառերի համար պետք է ընդունել տարբեր նախահիմքեր. հետ ձևը արդարացվում է նախալեզվյան ped- արմատով, իսկ

վրէտ «ոտք» բառի համար հիմք պետք է ընդունել eu ձևը, որը մի աճակա-  
նով կազմում է օդ «կոշիկ» բառը: Այս բացատրութիւնը հավաստում է նը-  
րանով, որ բարբառի մեջ կոշիկ բառի փոխարեն գործածվում է ոտնաման:

Տիգրանակերտի բարբառը հանդես է բերում մի այլ առանձնահատկու-  
թիւն: Այստեղ հնչյունի հաստատման համար հավանաբար կարևոր դեր է  
խաղացել բառի վանկաքանակը, քանի որ միավանկների սկզբում հաստա-  
վել է վո, իսկ մեկից ավելի վանկ ունեցող բառերի սկզբում՝ օ: Մյուս բար-  
բառներում պարզ արտասանութիւնը օ-ն առկա է միայն երեք և ավելի վան-  
կանի բառերի սկզբում, որը պայմանավորված է դիրքային հնչյունափոխու-  
թիւնով:

Այդ ամենը հանգեցնում է այն ենթադրութեան, որ նախալեզվյան բա-  
ռասկզբի օ-ն (երբեմն նաև քօ-ն) հայերենի վաղ կտրվածքում ուներ երկ-  
բարբառային արտասանութիւն, ընդ որում որոշ տարածքներում երկբար-  
բառը կազմող բաղադրիչները հավասարապես շեշտված էին, որի շնորհիվ  
առաջ նն եկել վո, և կապակցութիւնները, իսկ այլ տարածքներում երկբար-  
բառի այդ հատկութիւնը պահպանվել է շեշտի տակ, նախաշեշտ վանկում  
առաջին բաղադրիչը թույլ արտասանութեան պատճառով ընկել է, արդյուն-  
քում ստացվել է պարզ արտասանութիւնը օ ձայնավոր: Հին հայերենի հիմ-  
քում ընկած խոսակցական լեզուն վերջին պատկերն ուներ, և գրական լեզվի  
արտասանական կանոնների հաստատման ընթացքում նախաձայնը դուրս է  
հանվել նաև միավանկ բառերի սկզբում:

Որոշ բառերի սկզբում ո-ից առաջ ֆ բաղաձայնի գոյութիւնը պետք է  
բացատրել հայերենի մեջ կատարված հնչյունափոխութեամբ: Այն, որ ֆ-ն  
հանդիպում է միայն նախալեզվյան քօ-ի դիմաց, ցույց է տալիս, որ բառ-  
սկզբի հ-ն, միավորվելով երկբարբառի բաղադրիչ կազմող վ կամ Վ հնչյուն-  
ներին, դարձել է հվ կամ հւ, որոնց միասնական արտասանութիւնը էլ ձև-  
վորվել է ֆ՝ հվոդ/հւոդ>ֆոդ, հվոտ/հւոտ>ֆոտ, հվոր/հւոր>ֆոր, հվորթ/հւորթ>ֆորթ, հվորս/հւորս>ֆորս: Հարկ է ավելացնել, որ հնչյունափոխա-  
կան այս հնարավորութիւնը դեռևս Ա. Տոմսոնն է առաջարկել. միայն ֆ-ի  
առաջացումը հեղինակը հիմնավորում է մահ բառի ձևակազմական դրսևո-  
րումներով. «Սեռական հոլովի մանու-վան ձևը հավանաբար ձևավորվել է  
վան վերջավորութեան միջոցով, որը մենք գտնում ենք, օրինակ՝ ձմեռ, սեռ.  
ձմեռվան: Մաուֆան -ը զարգացել է նախկին մաուհվան ձևից. ֆ-ն՝ հ>վ  
կապակցութիւնից»<sup>10</sup>:

Գրաբար-աշխարհաբար տարբերակների: Բաղաձայնական անհամապա-  
տասխանութիւնների մեջ աչքի է ընկնում յ>հ փոփոխութիւնը՝ յայս>հայս,  
յիմար>հիմար, յորով>հորով, յոյզ>հույզ ևն բառերի սկզբում: Աշխարհա-  
բար գրական լեզվի բազմաթիվ օրինակներ վկայում են, որ հայերենի զար-  
գացման ընթացքում բառասկզբի յ-ն նոր որակ է ստացել և լիովին հեռացել  
մյուս դիրքերում պահպանվող իր կիսաձայնից: Հայագիտութեան մեջ որա-  
կական այս անցման վերաբերյալ կան շատ կարծիքներ, որոնց ամփոփումը  
կարելի է համարել Հ. Մուրադյանի հետևյալ դիտողութիւնը. «Բառասկզբի  
դիրքում յ-ի արտասանութեան մեջ աստիճանաբար բարձրանում է կոկորդա-  
յին շունչը, որին սկզբնական շրջանում, հայերենի բարբառների մի որոշակի  
տարածքում, դեռևս ուղեկցում է յ կիսաձայնի արտասանութիւնը: Սակայն  
այս արտասանութեան ընթացքում յ-ն աստիճանաբար կորցնում է իր միջ-

<sup>10</sup> А. Томсон, Краткий очерк фонетики и морфологии Ахалцыхского говора, СПб, 1887, ст. 35:



նալեզվային ձայնավորի հատկանիշները և ձեռք է բերում կոկորդային խուլ հ հագագի արժեք»<sup>11</sup>:

Պետք է ավելացնել, որ յ>հ փոփոխությունը չի ընդհանրացել հայերենում, այլ սահմանափակվել է ինչ-ինչ տարածքներում: Թեև բարբառային փաստերով հնարավոր չէ հստակորեն որոշել այդ փոփոխության տարածման վայրերը, սակայն նկատելի է, որ նախաձայն հ-ով ձևերը առավել բնորոշ են արևելահայ բարբառներին, ինչպես՝ յաջող>հաջող, յարմար>հարմար, յաղթել>հաղթել, յանգ>հանգ, յիշատակ>հիշատակ, յիսուն>հիցցուն, յիմար>հիմար, յիշել>հիշիլ, յոյս>հույս, յուշ>հուշ, յուրոպ>հուրոպ, յօժար>հօժար (Արարատյան, Ղարաբաղի, Գորիսի բարբառներ, Լոռու խոսվածք են): Սակայն զուգահեռաբար ունենք նաև յ-ի անկումով ձևեր թե՛ հիշյալ և թե՛ ուրիշ բառերում, ինչպես՝ յատակ>ատակ, յաղթել>էլիտիլ, յալիլուլ>իվիլցնել, յաջող>աչող, յիսուն>իցցուն, յուլանալ>ուլանալ, յօն(ք)>օնք, յօրաւել>ըրըշուտալ: Երևույթը կարելի է մեկնաբանել երկու հիմունքներով՝ կա՛մ արևելահայ գրական լեզուն է ազդել բարբառներին, կա՛մ խոսակցականում նախաձայն յ-ի փոխարեն նախապես գոյություն ունեւ թույլ արտասանություն մը հ, որը ամբողջությամբ հաստատվել է գրականում, իսկ բարբառներում պահպանվել է մասամբ: Մենք հակված ենք ընդունելու վերջին փաստը:

Արևմտահայ բարբառներին հատուկ է նախաձայն յ-ի անկման երևույթը, ինչպես՝ յաղթել>ախտէլ/աղթիլ, յաջող>աչող, յաջողել>անողէլ, յատակ>ադագ, յարդ>էրք, յիշատակ>իշատակ/իշադագ, յիշել>իշէլ/իշիլ, յիսուն>իցծուն/իսուն, յատակ>իտակ/լստագ/իտագ, յուրոպ>իբօբօպ, յոն(ք)>ունք (Տիգրանակերտի, Վանի, Կարնո, Մշո են բարբառներ): Այս հատկանիշով բառակազմի յ-ն նույնանում է բառավերջի թույլ դիրքին՝ հաստատուն մնալով միայն բառամիջում: Բարբառներում առկա հնչյունափոխական մի այլ երևույթ (հ>խ) ցույց է տալիս, որ բառակազմի յ-ի անկումը հին երևույթ է, և յ>հ փոփոխությունը չի գործել մի շարք տարածքներում. դրանով պետք է պայմանավորվել յ>հ>խ հաջորդական փոփոխության բացակայությունը Մշո, Վանի, Ուրմիայի ևն բարբառներում:

Երկբարբառների մեջ տեղի ունեցած հնչյունական տեղաշարժերով առանձնանում են ոչ միայն հին և նոր գրական լեզուները, այլև երևույթը ակնհայտ է աշխարհաբարի գրական և խոսակցական տարբերակների միջև, այսինքն՝ նոր գրական լեզուն չի ընդունել բարբառներում օրինաչափորեն գործող երկբարբառների պարզեցումը, այլ դրանց դիմաց ունի միայն երկհնչյուններ: Երևույթի հաստատման գործընթացի մասին բնորոշ կարծիք է հայտնում Հ. Մուրադյանը. «Այստեղ էլ երկհնչյունային արտասանությունը ոչ թե կենդանի բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխության արդյունք է, այլ երկբարբառների վերանալուց հետո՝ դրանց գրային արտահայտության հիման վրա գրական լեզվում ձևավորված արտասանություն»<sup>12</sup>: Այս դիտողությունը ընդունելի համարելով այ-ի և այլ երկհնչյունների բաշարդիչ կազմող յ կիսաձայնի համար՝ պետք է նկատի ունենալ, սակայն, որ գրական լեզուն ևս հետևել է ընդհանրական աւ>օ փոփոխությանը, իսկ բարբառներում հաստատված իւ>ու, ոյ>ու փոփոխությունները պատճառ են դարձել յու, ույ երկհնչյունների ձևավորման համար:

Հայագիտության մեջ շատ է խոսվել երկբարբառների արտասանական տարբերակների, դրանց ձայնավորացման գործընթացի վերաբերյալ: Նպատակ շունենալով կրկնելու դրանք, բայց հենվելով բարբառներում առկա բազ-

<sup>11</sup> Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 238:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 141:

մաթիվ փաստերի վրա՝ հարկ ենք համարում այստեղ ներկայացնել մեկ-երկու գործոններ ևս: Նախ՝ եթե հայերենի բարբառներում երկրորբառների մեծ մասը ենթարկվել է ոչ միատեսակ փոփոխությունների, ապա աւ>օ, փոփոխությունը ընդհանուր է ողջ հայերենի համար, ինչը ենթադրել է տալիս, որ այդ երկրորբառը կազմող բաղադրիչները ավելի սերտ էին, միասնական, աւ>օ փոփոխությունը կատարվել է փոխադարձ ազդեցությամբ: Երկրորդ պատճառը երկբարբառի կազմում լիաձայն հնչյունի առանձնացումն է, որը իր վրա է կրել հիմնական արտասանությունը, իսկ մյուս բաղադրիչը այս կամ այն շափով ներգործել է նոր հնչյունի ձևավորման վրա: Արտասանական այդ առանձնահատկությամբ պետք է բացատրել իւ>ու, ոյ>ու փոփոխությունները: Այս դեպքում մնում է պարզել, թե ինչով են պայմանավորված նույն երկբարբառներում տեղի ունեցած իւ>ի, ոյ>ի փոփոխությունները մի այլ խմբի բարբառներում: Թեև հայագիտության մեջ այս մասին որևէ հաստատուն կարծիք չկա, սակայն բարբառային փաստերի համադրումով կարելի է հանգել ստորև բերվող եզրակացության: Բանն այն է, որ Տիգրանակերտի, Մալաթիայի բարբառներում իւ>ու, իւ>ի փոփոխությունները պայմանավորված են բառի վանկաքանակով, այն է՝ միավանկ բառերի փակ վանկում՝ մշապես գործում է իւ>ու, իսկ երկվանկ բառերի փակ վերջնավանկում իւ>ի փոփոխությունը: Այս առանձնահատկությունը ոչ օրինաչափորեն պահպանվում է նաև հայերենի այլ բարբառներում: Այսպես՝ եթե Ղարաբաղի, Գորիսի, Ուրմիայի, Վանի ևն բարբառներում բացարձակապես ունենք իւ>ու փոփոխություն, ապա երկվանկ բառերում կա՛մ մասամբ խախտվում է օրինաչափությունը, կա՛մ առանձնանում են զուգաձևեր՝ հարիւր>հարուր/հարիւր, ալիւր>ալուր/ալիւր, աղբիւր>ախպուր/ախպիւր ևն: Երևույթի հաստատումն է գրաբարի ութիւն ածանցը, որը իւ>ի փոփոխությամբ համարյա ընդհանրացել է հայերենի բարբառներում: Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ իւ երկբարբառի տարբեր փոփոխությունների համար նախապես կարևոր դեր է խաղացել բառի վանկաքանակը, դրա հետ կապված՝ նաև շեշտը, այսինքն՝ միավանկ բառերում հաստատուն էր երկբարբառի արտասանությունը, և տեղի է ունեցել իւ>ու փոփոխություն, իսկ երկվանկ (նաև բազմավանկ բառերում), երբ շեշտվել է երկբարբառին նախորդող վանկը, շեշտից հետո ընկած իւ-ն փոխվել է ի ձայնավորի: Հնարավոր է, որ հայերենի վաղ շրջանում երևույթը համընդհանուր էր, որը հետագայում բաշխվել է ըստ տարածքների՝ մի վայրում ունենալով այդ հատկությունը, այլ վայրերում պահպանելով առանձին հետքեր:

Նկատի ունենալով վերոհիշյալ դիտարկումները և գրաբար-աշխարհաբար լեզուների հարաբերակցության մեջ առկա հնչյունական այլ տեղաշարժեր՝ ամփոփման կարգով կարող ենք ասել հետևյալը: Հին գրական լեզվի և ժամանակակից հայերենի խոսակցական տարբերակների հնչյունական համակարգերի ձևավորումն ու հաստատումը անցել է երկարատև ճանապարհ: Դրաբարի համակարգը համեմատաբար անաղարտ է պահել նախալեզվի և նախահայերենի պատկերը: Իր հիմքում ունենալով կենտրոնական Հայաստանի խոսակցականները՝ հին գրական լեզուն մասամբ է ենթարկվել արտաքին ազդեցությունների, որի շնորհիվ էլ նրա կանոնավորումը ընթացել է երկբարբառների պահպանումով, ձայնավոր և բաղաձայն հնչյունների մաքուր արտասանությամբ: Չնայած միևնույն ժամանակահատվածում են ձևավորվել ժամանակակից հայերենի բարբառների հնչյունական համակարգերը, այնուամենայնիվ դրանց վրա խիստ զգալի է արտաքին ազդեցությունները, որոնք առավել ակնառու են կենտրոնից հեռու գտնվող խոսակցականների վրա: Դրանով պետք է բացատրել եռաշարք համակարգի փոխարեն

պայթական բաղաձայնների տարբեր շարքերի գոյութիւնը, գրաբարից տարբեր ձայնավոր հնչյունների առկայութիւնը: Չի կարելի անտեսել խոսակցականների ներքին զարգացման միտումը, որը առավել պարզորոշ է երեւում երկբարբառների մենաբարբառացման ընթացքի և վերջնական հաստատման մեջ: Նկատելի է նաև որոշ ձայնավորների երկբարբառացման երեւութիւնը: Եթե բառասկզբում դրանք կարող են բացատրվել հնչյունափոխական հնագույն օրինաչափութիւններով, ապա բառամիջի համար պետք է ենթադրել, որ կարևոր դեր է խաղացել բառասկզբի ներգործութիւնը կամ արտաքին ազդեցութիւնը:

Այլ կերպ պետք է պատկերացնել արևելահայ գրական լեզվի հնչյունական համակարգի հաստատման ուղիները: Ճիշտ է, վերջինս ամեն կերպ ձգտել է ժառանգել գրաբարի գրային արտացոլումը, սակայն շի կարողացել խուսափել խոսակցականների ազդեցութիւնից: Եթե գրաբարի պատկերով նոր լեզվում հաստատվել է պայթականների եռաշարք համակարգը, ձայնավոր հնչյունների մաքուր արտասանութիւնը բառամիջում և վերջում, ապա խոսակցականների ազդեցութեամբ պետք է մեկնաբանել երկբարբառների դիմաց երկհնչյունների գոյութիւնը, բառասկզբի դիրքում  $b > j$ ,  $n > ւ$ ,  $j > հ$  արտասանական փոփոխութիւնները: Որպես ընդհանուր բնորոշում նոր գրական լեզվի համար, կարելի է ասել, որ նրա հնչյունական համակարգի գրային հիմքը գրաբարյան է, իսկ արտասանութիւնը՝ աշխարհաբարյան, որոնցով և հաստատվում է, որ այն ձևավորվել է ուշ շրջանում, միայն այն ժամանակ, երբ իր հիմքը կազմող խոսակցական տարբերակներում արդեն հիմնավորված էին արտասանական նորմերը, պատմական հնչյունափոխութեան տարբեր կարգի երևութիւնները:

**Б. Х. МЕЖУНЦ — Несколько фонетических передвижений в армянском языке.** — Несмотря на то, что соотношение литературных грабара и ашхарабара характеризуется одинаковым произношением гласных и согласных, ашхарабар унаследовал от старого языка некоторые различия, которые прежде всего выражаются в переходе  $b > j$ ,  $n > ւ$ ,  $j > հ$ , некоторых звонких в придыхательные и двузвучном произношении дифтонгов. Исследование показывает, что только фактами грабара невозможно выяснить подобные несоответствия и, естественно, часто приходилось обращаться к различным историческим основам и диалектным фактам. Из сопоставления всего этого проясняется, что некоторые явления перешли в армянский из индоевропейского языка, а причина других — внутреннее развитие армянского языка.